

ՆՕՔ ԵՒ ՆԻՇ

Ճապոնյէ և Ռանդուէնէ ստացուած նամակներէ ուրախութեամբ կ'իմանանք թէ Կեր. Տ. Թէոգորոս Ն. Վրդ. Զուգայեցի, Ամերիկայէ դէպի Պարսկաստան ճանապարհորդած միջոցին այցելելով Պիրմանիոյ և Հռլանտական Հնդկաստանի ոստաններու գաղթարնակ իր հայրենակիցներուն, ջերմ ընդունելութիւն գտած է ամէն կողմէ Ազգասէր և պատուական հնդկահայերը, որոնք ազգային և եկեղեցական յառաջդիմութեան զաղափարներուն հանդէպ իրենց համակրութիւնը իրենց գործերով ցոյց տուած են ի վաղուց անտի, քաջալերած են զիտնական վարդապետը, իրենց ծննդավայր Նոր Զուգայի մէջ հոգեւորականներու պատրաստութեան համար ընծայարան մը հիմնելու ծրագրին առթիւ: Շնորհաւորելի են հնդկահայք, իրենց այդ ձեռնարկին յաջողութիւնը ապահովող ձեռնհաս կարողութիւն մը գտած ըլլալնուն համար յանձին համալսարանական վարդապետին: Բայց շնորհաւորելի է մանաւանդ այս վերջինը, իր նպատակին արգիւնազործումը ապահովող բարի ուժ մը ունենալուն համար յանձինս սրտով և դանձով հարուստ իր հեռաստանեայ համաքաղաքայիններուն: — Կը մաղթենք ի սրտէ որ կողմուած ծրագիրներն և տրուած խոստումներն շուտով իրականան, և վաղնջական ու նախանձելի Զուգան, որ վերջին քանի մը դարերու ազգային մտաւոր և հոգեւոր բարգաւաճման ակնադիրը է հանգիստացած, վերստին ողջունէ իր հին փառքի օրերը:

Նոյնպիսի նամակներէ հաճութեամբ կ'իմանանք դարձեալ թէ հնդկահայ ազգային բարերար Պ. Դաւիթ Դաւիթեանի կողմէ Թեհրանի ազգային վարժարանաց համար եղած զպրօցական բարեգործութեան անմոռանալի ձեռնարկին մէջ թելադրիչ և քաջալերիչ կարեւոր դեր կատարած են Պ. Յովսէփ խան Ղարախանեան, ինչպէս նաև Կալիկթայի վիճակաւոր քահանաները: Որչափ շատ լսուին Զուգայեցի բարերարներու և բարեգործներու սիրելի անուններ, վստահ ենք թէ այնքան մեծ կը լինի ազգային հրճուանքը ի տես իր հեռաստանեայ զաւակներուն արթուն և բարի գործունէութեան:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● Կիր. 6 օգոստոս. — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ քարոզեց Տ. Հայկազուն Վրդ., խօսելով օրուան հաշու աւետարանէն, նկարագրեց տան բորոտներու բժշկութեան հրաշքը, անկէ հանելով սրտագրաւ դասեր՝ ապերախութեան համատարած բայց նողկալի և երախտադիտութեան սակաւադէպ բայց շինիչ երեւթներու:

● Դշ. 9 օգոստոս. — Ս. Քաղաքիս խալական հիւպատոսը, Գօմ. Մարիանօ Տէ Անէէլա, այցելեց Ս. Պատրիարք Հօր, և հրաւիրեց ներկայ գտնուիլ իր դստեր Պասկի օրհնութեան հանդէսին:

● Ուր. 11 օգոստոս. — Ս. Պատրիարքը, Տ. Սմբատ Սրբազանի և Տ. Եղիշէ Արեղայի հետ այցելութեան գնաց ժողովուրդաց խոնարհաբոյն դասարանի և կրտսեր սարկաւազներու կարգին, որոնք Փոխ-Տեսուչ Տ. Զգոն Վրդ.ի հետ, ամառնային արձակուրդի առթիւ հօլոց գացած էին երկու ժամ հեռաւորութեամբ Պիթիր կոչուած գիւղը, երկաթուղագծին վրայ, որ Աստուածաշնչի խնկարբեր բլուրն է: Կէս օր մը անոնց հետ անցընելէ վերջ, դարձաւ երեկոյին:

● Շր. 12 օգոստոս. — Դոմինիկեան դիտնական Հ. Արէլ, և յետոյ Ս. Կոստին Ննջումի վանուց միաբան հայր մը այցելեցին Ս. Պատրիարք Հօր:

● Կիր. 13 օգոստոս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի հայկական վերնայարկ մատուռին մէջ:

Ս. Պատրիարք Հայրը Ս. Պատարագին ներկայ գտնուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր և քարոզեց:

● Բշ. 14 օգոստոս. — Տեսօրէն ժողովոյ այսօրուան նիստին մէջ յատկապէս նկատի առնուեցաւ Հայֆայի ազգային գործոց վիճակը. կարգացուեցաւ տեղական ժողովի նամակը և լսուեցաւ տեղւոյն Տ. Յակոբ քահանան, որ այդ նպատակաւ կանչուած էր: Որոշուեցաւ եօթնի բարձրացնել նոյն ժողովին անդամներուն թիւը:

● Կիր. 20 օգոստոս. — Տ. Նորայր Վրդ. քարոզեց Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, օրուան ճաշու Աւետարանի ընթերցուածէն առնուած բնարանի մը վրայ (Մարկ. Բ. 9), և ի վեր հանեց մեղքի և տառապանքի միջև գտնուող սերտ կապակցութիւնը:

● Բշ. 21 օգոստոս. — Տ. Սերոբէլ և Տ. Շաւարշ վարդապետներ, որոնք երկու տարիէ ի վեր կը հեռէին Լոնտոնի Քինկս ցօլէճի կարգ մը կրօնական և եկեղեցագիտական դասերուն, իրենց այսամենակ ըջջանը աւարտած լինելով, ժամանելին Ս. Աթոռս: Ս. Սուրեն, Տ. Պարզե վարդապետներ և Տ. Ասողիկ Արեղայ ընդ առաջ գացած էին մինչև Յոպպէ:

Յ. Դշ. 22 օգոստոս. — Ս. Պատրիարք Հայրը, Տ. Սմբատ Սրբազանի և տասն վարդապետներու ընկերակցութեամբ այս առաւօտ հիմերու օրհնութիւնը կատարեց երկրորդ մեծ շինութեան մը, որ վանքապատկան Մեծ Առա կոչուած զետանին վրայ պիտի կառուցուի ինչպէս անցեալ տարի կառուցուածինը, նոյնպէս և ասոր եկամուտները պիտի ծառայեն պարտուց շինութեան գործին:

Յ. Դշ. 23 օգոստոս. — Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ Վրդ. և Տ. Եղիշէ Արեղայի, ներկայ գտնուեցաւ խաղական ընդհ. հեղափոխութեան զարթոյցի պահին՝ Յրանչիականց Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ, ուր ներկայ էին նաեւ միւս հոգեւոր պետերը, հեղափոխական մարմինը և մեծ բաղմունքիւ երեկեցացի:

Յ. Եշ. 24 օգոստոս. — Ս. Աթոռիս Կիւլպէնկեան Մատենադարանի կահուց շինութեան գործը կարգադրուեցաւ վերջնապէս, յանձնուելով մասնաւոր կապալառուի մը, յետ նուազաբոլոր գործողութեանց:

Յ. Ուր. 25 օգոստոս. — Ս. Պատրիարքը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին, ի Գեթսեմանի, Ս. Կոյսին գերեզմանին առջև, ուր, վերափոխման նախընթաց 15 օրերուն ամէն առաւօտ հանդիսիւ կը պատարագեն Հայեր, Յոյներ, Ղպտիներ և Ասորիներ:

Յ. Շր. 26 օգոստոս. — Շօղակաթի տօնին առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի «Էջմիածին» եկեղեցիին մէջ: Ս. Պատրիարք Հայրը հակիրճ քարոզով մը բացատրեց լուսաւորչի տեսիլքին հոգեւոր իմաստը, զայն ներկայացնելով իբրեւ ազգային գիտակցութեան ձգտումը զէպի կրօնական լուսաւորութիւն:

Տ. Զգոն Վրդ. և իր առաջնորդած ժառանգաւորներու և սարկաւագաց խումբը վերադարձան արձակուրդի հոլօցէն:

Երեկոյին, Ս. Պատրիարքը և բովանդակ Միաբանութիւնը և աշակերտութիւնը հանդիսաւոր երթով գացին Գեթսեմանի, ուր «Հրաշափառ» ի մեծ թափօր տեղի ունեցաւ, վաղուան վերափոխման տօնին առթիւ, և ապա կիրակաւոտքի ժամերգութիւն և նախատօնակ կատարուեցաւ:

Միաբանութեան և աշակերտաց մեծագոյն մասը մինչև կէս գիշեր անդ մնացին, և Հօկումի և գիշերային և առաւօտեան ժամերգութիւն կատարեցին:

Յ. Կր. 27 օգոստոս. — Վերափոխման տօնի առթիւ Աստուածամօր գերեզմանին վրայ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Տ. Սմբատ Սրբազան Եպիսկոպոս: Ս. Պատրիարք Հայրը քարոզեց, վերլուծելով հոգեական այն վիճակը, զոր զաւակ մը կ'ունենայ իր մօրը գերեզմանին առջև: Ս. Կոյսին յիշատակին մէջ մատնանշեց քրիստոնեայ մարդկութեան յանձնարարուած հո-

գեւոր մօր մը բարոյական պատկերը, և բացատրեց թէ անոր եւ մեր միջև ծնողի եւ զաւկի յարաբերութիւն մը զգայաւ միակ միջոցը աւետարանով քարոզուած վերածնունդին մեր մէջ իրականացումն է:

Յ. Բշ. 28 օգոստոս. — Մեռելոցի առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկչի վանուց բակի բացօթեայ սեղանին առջև: Տ. Սիւն Վրդ. քարոզեց, մեռելոց յիշատակին մէջ ցուցնելով անցեալին անմահութենէն ներկային և ապագային համար աւանդուած պատգամներ:

Երէց սարկաւագներ և ժառանգաւորացի երկու բարձրագոյն զատարանները, իրենց Տեաչին Տ. Տիրան Վրդ. ի առաջնորդութեամբ այսօր Գիթի մեկնեցան, ամառնային արձակուրդի իրենց շրջանը կատարելու համար:

Յ. Դշ. 29 օգոստոս. — Ս. Պատրիարք Հօր այցելեց կառավարական գրադարանի նոր տնօրէն Մր. Հարթիչը:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ կ'արձանագրենք նետեալ նրւերը:

Սիօնից

Երուսաղէմացի Մեծ. Տիար Դէորդ Սանակեանէ 10 պաղ. ոսկի:

Մասնադարանից

1. — Codificazione Canonica Orientale. — Fonti. — Fascicolo VII., Disciplina Armena. — Testi Vari di Diritto Canonico Armeno (Secoli iv-xvii). — Tipografia Poliglotta Vaticana, 1932. — P. Garabed Amaduni. Էջ 632. Prezzo L. 36. — Հեղինակէն:

2. — ՀԱՅ ԲԱՌԵՐՈՒ ԱՂԵԻԻՐՆԵՐԸ, Սուրբաբանական Ռուսմատիքիքն. Նորայր Ե. Վրայր, 1930, Հրատ. Մ. Տէր Սանակեան, 139, Avenue Isabelle, Anvers, Belgique. — Էջ 119. — Հեղինակէն:

3. — ՔՐԵՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Մ. Յ. Անանիկեան, Հրատ. Հայ Կր. Հիմնադրութեան, Նիւ Եորք, 1932, էջ 319, գին 1,75 օրաւ: — Հրատարակչէն:

4. — ԱՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ, Յովն. Պողոսեան, 1933, էջ 111, գին 12 եգ. դոմ.: — Հեղինակէն:

5. — ՓԱՌԱՆՅԵՄ, Վէպ, Գ. Հասար, Հեղինակ՝ Օ. Սամբոյ, քղմ. Տ'Աբոս, Գանիթէ, 1933, էջ 280, գին 15 եգ. դոմ.: — Թարգմանչէն:

Բարեպաշտական

Կեսարացի Տիկ. Եփուհի Բացախեանէ՝ մանիսկապոյն կեցիկի վրայ ինքնաձեռագործ սեղանի ծածկոյ մը, Զմիւռնիցի Օր. Մարի Նիկողոսեանէ՝ կարմիր արյաւի վրայ անքնի վրձնիկ բանուած ինքնաձեռագործ վարագոյր մը Ս. Գլխադրի համար:

Շատ մը բարեպաշտներ՝ Եփուստէն, Ամերիկայէն եւ Երուսաղէմէն, զանազան զուտարներ՝ իբրեւ պատարագոյ, իւղազին եւ մօմօզին: — Մալաթիացի այրի Տիկ. Եփուսեթ Կիւրեղեան ըրած է նաեւ մասալ մը: